№ 229 Դեկտեմբերի 23 1880 Դեկտեմբերի 23 № 229

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպէկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 թւին

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Կը հրատարակվի նոյն դիրքով և նոյն պրոգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ. I. Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆելիետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 ռուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 ռուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական մտածմունքներ։—Ներքին տեսութիւն։ Նամակ Երևանից։ Նամակ Երևանից։ Նամակ Ղարսից։ Նամակ խմբագրին։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Բօսֆոր և Գամբէտտա։ Թիւրքիա։ Միջնորդ դատարան։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆՔՆԵՐ

Ինչ կարծիք պէտք է ունենայ Թիւրքիան Եւրոպայի մասին: Եւրոպայի բոլոր հզօր պետութիւնները միացած՝ ռուս-թիւրքաց պատերազմից յետոյ վճիռներ են կայացրել Բերլինի կոնգրէսում: Եւ ահա երեք տարի է անցել կոնգրէսի կայանալուց յետոյ,—իսկ նրա վճիռներից գրեթէ ոչ մինը դեռ չէ կատարվում:

Հազիւ կարողացան ստիպել Բ. Դուռը յանձնել Դուլցինիօն Չեռնոգորիային: Իսկ Յունաստանի սահմանների խնդիրը մինչև այժմ անորոշ է մնում: Եւրոպան իր ամբողջ զօրութեամբ, իր նաւերով չէ կարող կատարել տալ Բ. Դրանը իր կոնգրէսի վճիռները, յուսահատվում է և յետ է քաշվում: Յետոյ, կարծես խելքի գալով, կրկին առաջարկում է միջնորդ դատարան Յունաստանի հարցի պատճառով: Թիւրքիան մերժում է և միջնորդ դատարանը: Ինչ պէտք է անի Եւրոպան,—յայտնի չէ:

Այդպիսով Չեռնոգորիայի խնդիրը լաւ թէ վատ վճռվեցաւ, Յունաստանի խնդիրը մինչև այժմ չէ վճռվում և գուցէ երկար ժամանակ չի վճռվի, իսկ Հայաստանի խնդրի մասին, կարծես բոլորովին մոռացել է Եւրոպան:

Գուցէ եթէ Անգլիան չունենար իր ներքին խռովութիւնները, չունենար իր կալուածական խնդիրը Իռլանդիայում, նա մենակ կարող էր աւելի շատ անել արեւելեան խնդրի լուծելը առաջացնելու համար, քան թէ ամբողջ Եւրոպան, իր երևելի համաձայնութեամբ:

Այդպիսով Թիւրքիան խաղացնում է ամբողջ Եւրոպային: Եւ անպիտանն այն է, որ մոլեռանդ թիւրքերը չեն ասի թէ Եւրոպայի պետութիւնները չը կարողացան համաձայնութիւն կայացնել իրանց մէջ, բայց կասեն թէ ամբողջ Եւրոպան Օսմանեան պետութիւնից վախենում է: Այդ իր թուլութեամբ Եւրոպան կը կորցնի իր ամբողջ հեղինակութիւնը արևելքում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

10 դեկտեմբերի

Տուն չէք գտնի Երևանում, ուր հիւանդ չը լինի. վարդահիւանդը, հարբուխը, բկացաւը (կոկորդացաւ) ջերմի ամեն տեսակը՝ տարածված են ոչ միայն քաղաքումս, այլ և գաւառիս մէջ. Թուրք հասարակութեան մէջ աւելի է հիւանդացողների և մեռնողների թիւը, քան թէ հայերի մէջ. Սորա պատճառը այն է, որ Թուրքերի բնակարանները, թաղերը, խանութները, դպրոցները շատ աւելի կեղտոտ են, քան թէ հայերինը. Թուրքերի բաղանիքները տարածող են ամեն տեսակ հիւանդութիւնների, որովհետև նրանց աւազանների կամ ջրի շտեմարանների մէջ ամենայն ցաւոտ և աղտոտ մարդ մտնում լողանում է և մի և նոյն ջրով լողանում են ամենքը, համոզված լինելով թէ ջուրը չի պղծվի. Բացի այդ՝ Թուրքերը հիւանդութեան միջոցին բժշկի չեն դիմում, այլ իրանց մօլլաններին են դիմում, որոնք ամենայն ցաւ կամենում են բժշկել աղօթքներով կամ պառաւական խրատներով։—Ընդհանրապէս խօսելով, մեր արհեստաւորների և վաճառականների դուքաց, ցուրտ, խոնաւ ու խաւար խանութները, շուկաներում պատրաստի վաճառվող բոլոր կերակրեղէնները՝ թէ եփած և թէ հում, վաճառանոցների չուրջը և քարւանսարայների մէջ դիզված աղտոտութիւնները, հրապարակների անմաքրութիւնը, ցուրտ ու կեղտոտ բաղանիքները և այլն, ահա, սրանք են գլխաւորապէս հիւանդութիւն տարածող միջոցները, որոնց վրա չը կայ ոչ մի կողմից առողջապահական հսկողութիւն.

Աւելացնենք սրանց վրա և այն, որ քաղաքիս հիւսիսային կողմում գտնվում է հայոց հանգստարանը, հարաւային կողմում Թուրքաց գերեզմանատունը, և արևմտեան կողմում ռուսացը, որոնցից միշտ նեխած գազերը բերվում են քամու հետ քաղաքիս մէջ և որոնք քաղաքիս կենտրոնից մի-մի վերստ հազիւ թէ հեռու են գտնվում. ի նկատի առնելով և այն, որ աղքատ և անտէր մեռեալների գերեզմանները մի արշինից խոր չեն փորվում և նրանց դիակները շատ թեթև են ծածկվում հողով, ապա կարելի է երևակայել թէ ո՛ր աստիճանի հսկողութիւն է հարկաւոր մեր քաղաքին։- Այլ ես չեմ խօսում տակից սապոնաջուր քաշած սանջակ—հացի և ժանգոտ պղնձի մէջ փորոտիքից տապակած տժվժի կոչված ուտելիքի մասին, խոհարարների ժանգոտ կաթսաների մէջ եփած հոտած կերակրների մասին, չեմ խօսում մեր պղտորած գինիների կապարի կտորներով պարզացնելու վտանգաւորութեան մասին և այլն և այլն։ Թողում եմ որ այս ամեն չարիքների մասին խորհեն և ուշադրութիւն դարձնեն այն մարդիկը, որոնց հսկողութեան է յանձնված մեր ողորմելի քաղաքը, ուր ոչ աղքատանոց կայ, ոչ հիւանդանոց, ոչ էժանագին դեղերանոց, ոչ հասարակաց բժշկանոց, որոնց մասին մեր քաղաքային վարչութիւնը գուցէ չէ էլ մտածում։

Երևակայեցէք ձեզ մի աղքատ ընտանիք, հինգ վեց հոգուց բաղկացած, որի ամսական հասոյթը տասն կամ տասն և հինգ ռուբլուց աւելի չէ, վարդահիւանդը (տիֆը) կամ մի ուրիշ վարակիչ հիւանդութիւն մտել է այդ ընտանիքի մէջ. Դա չէ կարող բժիշկ հրաւիրել, որովհետև ծրանիցից տայ իւրաքանչիւր այցի համար երկու ռուբլի, ֆայէտօնի փող, ճարի վարձ և այլն։ Վարակիչ հիւանդութիւնը տարածվում է այդտեղից և մտնում է հարուստների տների մէջ նա։ Թէև այս հարուստները հրաւիրում են բժշկին, բայց և այնպէս չեն կարողանում առանց զոհի ազատվել, որովհետև ընդհանրապէս վարակված օդից ու ջրից դրանց էլ է բաժին ընկնում։

Այնուամենայնիւ այդ հարուստները չեն մտածում քաղաքիս օդի և ջրի մաքրութեան մասին, չեն հասկանում որ ամենից շատ օդն ու ջուրն են վարակվում և վարակում հասարակութեան հարստին և աղքատին։

Քաղաքիս մէջ մի հատիկ բարեմիտ մարդ գտնվեց, որ խոստացաւ 10,000 ռուբլի նուիրել Քառասն-աղբիւրից ջուր բերելու նպատակին. միւս հարուստները փակեցին իրանց քսակների բերանը մի այդպիսի բարեգործութեան դէմ, և մինչև օրս գործը մնացել է անորոշ դրութեան մէջ. Ոչ ոք չէ մտածում, որ իւրաքանչիւր տարի 500 հայ և 700 թուրք ծնած երեխաներից միայն 50 հայ երեխայ է ապրում, և 50 թուրք, միւսները մեռնում են, ըստ մեծի մասին ջրի և օդի անմաքրութեան պատճառով։—Արդէն չափել ու կշռել են, որ Քառասն-աղբիւրների ջուրը հեշտութիւնով կը գայ քաղաքս. ծախքի համար էլ ասում են, որ 24—30,000-ից աւելի չի լինի, որի 10,000-ը մեծ. Ղևոնդ Ղազարեանն է տալիս, նա՝ որ Գ. օր. դպրոցն էլ իր հաշուովն է շինել. բայց մնացեալ 14-20000-ը գոնէ ամբողջ քաղաքի վրա պէտք է հաշուել, որպէս զի այդ ամենակարևոր և ամենաբարի առաջարկութիւնը չը մնայ անիրագործելի. Եթէ քաղաքիս մէջ 20 հարուստ մարդ չը գտնվեն, որք հազարական ռուբլի նուիրեն և գործը գլուխ հանեն, գոնէ հեշտութիւնով կարելի էր գտնել հազար մարդ, որ տային 20-ական ռուբլի. Հարկաւոր էր միայն, որ քաղաքիս վարչութիւնը փոքր ինչ աշխատէր այդ կենսական խնդրի մասին. Եթէ այդ էլ չը յաջողվէր, այն ժամանակ կարելի էր պակասող գումարը փոխարինաբար վեր առնել մի տեղից և բերած ջուրը բաժանելով թաղերի վրա, իւրաքանչիւր տանից տարեկան մի որոշ տուրք առնել. զոր. 1—2—3 ռուբլի, մինչև պարտքի վճարելը. Քաղաքս 3500 տանից աւելի է. Թող 500 տունը ձրի ջուր խմէր, մի հազարը տար մի մի ռուբլի տան գլուխ. միւսը՝ երկու-երկու ռուբլի, երրորդը՝ երեքական ռուբլի. այդպիսով տարեկան մօտ 14,000 ռուբլի կը հաւաքվէր և ոչ ոքի էլ մի զգալի ծանրութիւն չէր լինի, այն ինչ հարիւրաւոր հոգիներ մահից կազատվէին. Արդեօք ո՞ր բանական մարդը կը մերժէր իր առողջութեան համար վճարել այդ չնչին գումարը. Եթէ մինչև անգամ իմ ցոյց տուած գումարի կէսն էլ ժողովվէր, դարձեալ 3—4 տարվայ միջոցում կարելի էր վերցրած պարտքը վճարել, գործն էլ գլուխ բերել. Իսկ ինչ կը վերաբերի քաղաքիս օդի մաքրութեան, այդ մասին ես հրաւիրում ենք քաղաք. վարչութեան ուշադրութիւնը դէպի Ս. Սարգսի ճանապարհը, Մեչիթի և Զարսուի խանի աւերակը, դէպի ոստիկանատան քամակի հրապարակը, դէպի այն տեղը, ուր մտադրութիւն կայ գիմնազիա շինելու և վերջապէս դէպի բաղխանի կտուրները. Այդ տեղերում դիզված մարդկանց աղբերից մշտապէս բարձրանում են գարշահոտ գոլորշիներ և ապականում օդը. Բայց գուցէ ասէք, որ այդ տեղերը մշտապէս մաքրել չի կարելի, քանի որ յարմարաւոր արտաքնոցներ չը կան. համաձայն եմ, միայն, թէ հարկաւոր է շտապել շինել այդպիսի արտաքնոցներ և մինչև դորանց շինելը կարելի եղածին չափ պէտք է արգելել անամօթներին, որ գոնէ փոքր ինչ հեռու գնան ճանապարհներից և իւրաքանչիւր խանութպանի շուտ-շուտ մաքրել տալ իր շուրջը, ապա թէ ոչ հիւանդութիւնն անպակաս կը լինի քաղաքիցս, որովհետև այդ տեղերը գտնվում են քաղաքիս կենտրոնում. Քաղաքիս եկամուտը հասնում է 55,000 ռուբլին և այդ գումարից դուք յատկացրել էք քաղաքի մաքրութեան համար մի չնչին գումար, կարծեմ 7—800 ռուբլի, գոնէ այդքանն էլ իրօք ծախսէիք մաքրութեան մասին։—Եթէ չեմ սխալվում մօտ երկու ամիս է, որ քաղ. վարչութիւնը մի առողջապահական մասնաժողով է ընտրել, որի նախագահն է իրաւասու և քաղաքային բժիշկ պ. Լևոն Տիգրանեանցը, բայց թէ ինչ շինեց այդ ժողովը, մինչև օրս ոչինչ չէ յայտնի։

Նորայր

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

24 դեկտեմբերի

«Մշակը» վնասակար է, ազգակործան է, մոլորեցնող է, ասում են «Մշակի» երդուեալ թշնամիները, գոռում են բաց աչքով կոյրերը, գրում են սև նախանձով լցված սրտերը, սուտը ճշմարտութեան տեղ ծախող դիպլօմատուր մըղդաքը....

Բայց մինչեւ ճշմարտութիւնը կը ծածկվի, լոյսը կը քօղարկվի, արդարութիւնը լոկ ցնորք է.

Անցան այն ժամանակները, երբ խօսքերով էին պատիւ ու փառք ժառանգում. Ներկայ դարս խօսքի տեղ գործ, արդիւնք է պահանջում.

Մի թեթև ակնարկ գցէք, նեղութիւն քաշէք